ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /374281/ 2 25 22**

«_____» հուլիս 2020թ. **N ----------**

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետին 2020 թվական հուլիսի 28-ին հասցեագրված (մտից փաստաթուղթ թիվ 5443, 28.07.2020թ.) Ձեր թիվ 345-95 հարցման՝ ներկայացնում ենք, որ համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 219[1] –րդ հոդվածի 1-ին մասի՝ տարածքային կառավարման մարմինները քննում են Օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 1-ին, 9-րդ մասերով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերը: Տեղեկացնում ենք, որ Օրենսգրքի 43.1 հոդվածի 1-ին և 9-րդ մասերով սահմանված դեպքերով ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից վերջին 5 տարիների ընթացքում վարչական վարույթներ չեն հարուցվել:

Օրենսգրքի 43.1-րդ հոդվածի 2-8-րդ և 10-12-րդ մասերով վարչական պատասխանատվություն կիրառելու հետ կապված հարաբերությունները գտնվում են տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության տիրույթում և, տեղեկատվության տնօրինող չհանդիսանալու պատճառով, հարցման այդ մասին չենք կարող պատասխանել:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Ն. Մաղաքյան, Հեռ. (0281) 2 55 95